զաղաւթս և սուտ անուն Սարկաւագի Թադէոսի ցանկացող եղէ այս աստուա-ծախաւս մատենի և ստացայ զսա ինձ գանձ անկողոպտելի և փրկանս մեղուցեալ հոգւոյ իմոյ.... ։ Բայց արդ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ և սուտա-նուն և փցուն և անարհեստ գրչի Թադէոս սուտանուն Սարկաւագի։ Ի լաւ և յընտիր աւրինակէ, ի սահմանս Սուրբ Քաղաքիս Երուսաղէմի և հռչակաւոր Անապատս ի վանս սրբոյն Սաբայի, ընդ հովանեաւ սրբոց որ անդ են հան-գուցեալ։

Դարձեալ աղաչեմ զձեզ զի յիշեսջիք զհոգևոր եղբայրն իմ զՅովհան-նէս որ զԹովմասն կոչեցաւ եւ զՄարկոս միայնակեցն եւ զմիաբանս Սուրբ Փրկչիս։

Դարձեալ ծանիրուք ո՛վ սուրբ եղբարք որ դասք յիշատակ հոգւոյ մե-րեց զսուրբ Աւետարանս հոգևոր որդւոյ մերոյ և աշակերտին իմոյ տէր Աբ-րահամ դեռաքոնիկ քահանային Մուրցոյ. Աստուած արժանի զինքն և զիւր որդին, զի քաղցր անգամ աշխատեցաւ հետ ի մեզ ի մարմնաւոր պիտոյից ծառայութեան անելով։

Ծանիրուք ո՛վ սուրբ եղբարք վկայութեամբ Աբրահամ վարդապետին և տէր Տանականին և տէր Սողոմոնին և տէր Հայրապետին որ դուք զսուրբ Աւետարանս յիշատակ հոգւոյ մերոյ տէր Աբրահամին. Եթէ ոք կամեցի ի դմանէ դուս հանելով կամ գողանալով. զմասն Յուդայի առցէ և զխաչահանացն։ ԹՎԻՆՈՒԹԵԱՆ Դ. Հայոց ՋԻ (= 1471)։

*Այս յիշատակարանէն որոշապէս կը հասկցուի որ Թադէոս սարկաւագ, իբր հայ միաբան, 1455ին, Սաբայի վանքին մէջ կ'ընդօրինակէ Աւետարան մը, իր անձին համար, աշխատակ-ցութեամբ Ս. Փրկչի միաբան Թուղթ կոչող Յովհաննէսի՝ իր հոգևոր եղբօրը եւ Մարկոս միայնակեցին, եւ 16 տարի ետքը նոյն Աւետարանը կը նուիրէ իրեն աշակերտին Մուրցի Տէր Աբ-րահամ Քահանային։*

## Դ. Հայ Միաբանութեան եկեղեցին Մար-Սաբայի մէջ.

*Ըստ Սկիւթուպոլսեցւոյն բացատրութեան, ինչպէս տեսանք վերև, Մար-Սաբա Հայոց միաբաններուն բազմութեանը պատ-ճառաւ իր յատկացուցած մատուռը նեղ գալուն համար, յանուն Ս. Աստուածածնի նոր եկեղեցի մը կը շինէ «տռաւելագոյն վա-յելչութեամբ և մեծութեամբ»։ 501ին կը կատարուի այս շինու-*